ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԸՆՏԱՆԻՔ» ՄՊՄԿ ՊՈԱԿ-Ի ԵՎ ՍՈՎՈՐՈՂԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԱՆՎՃԱՐ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Շիրակի մարզ, ք. Գյումրի ,,_____,,_____2025թ.

ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրեն՝
Ա. Մինասյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա մի կողմից, և Սովորող _____, _____,
/այսուհետ Սովորող/ /այսուհետ Սովորողի Օրինական ներկայացուցիչ/
մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1.1 6-18 տարեկան սովորողների արտադպրոցական կրթության անվճար ուսուցում:

1.2 Արտադպրոցական կրթության ծրագրերի իրականացում՝ հանգստի և ժամանցի կազմակերպման միջոցով սաների հոգևոր, ստեղծագործական ունակությունների զարգացում, մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծում, գեղագիտական, բնապահպանական, ֆիզիկական դաստիարակության ապահովում, համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորում՝ հաշվի առնելով սովորողների պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1 Հաստատությունում ուսումնական գործընթացը կազմակերպվում է տնօրինության կողմից հաստատված ուսումնական ծրագրերի, թեմատիկ, դաստիարակչական աշխատանքների պլաններին և կանոնադրությանը համապատասխան:

2.2 Սովորողի ընդունելությունը Կենտրոնում իրականացվում է.

2.2.1 տնօրենի հրամանով՝ Սովորողի կամ նրա Օրինական ներկայացուցիչի դիմումի և Օրինական ներկայացուցչի հետ կնքված սույն Պայմանագրի հիման վրա,

2.2.2 սովորողը կամ նրա Օրինական ներկայացուցիչը սահմանված կարգով հաստատություն է ներկայացնում համապատասխան փաստաթղթեր,

2.2.3 սովորողին խմբից խումբ տեղափոխելը կամ մեկից ավելի խմբակ հաճախելը կատարվում է սովորողի կամ Օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա,

2.3 Սովորողի անհարգելի բացակայությունների համար պատասխանատու է նրա Օրինական ներկայացուցիչը:

2.4 Ուսումնական տարվա ավարտին տարեկան թեմատիկ պլանին համապատասխան կազմված հարցաշարի միջոցով կատարվում է սաների տեսական գիտելիքների զուգակցմամբ կատարած գործնական աշխատանքների ստուգում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, կենտրոնի Կանոնադրությամբ ու սույն Պայմանագրով, Սովորողի և Սովորողի Օրինական ներկայացուցչի ներքին կարգապահական կանոններով:

3.2 Կենտրոնը իրավունք ունի.

3.2.1 ուսումնական ծրագրում, որպես անբաժանելի մաս, ներառել նաև սովորողի առողջության պահպանման միջոցառումներ,

3.2.2 սովորողի ուսուցումը, դաստիարակությունը ու հանգիստը կազմակերպել ուսումնաարտադրական գործընթացներում, մարզաառողջարարական ճամբարներում, հանրապետական, մարզային և քաղաքային միջոցառումներում,

3.2.3 սովորողի Օրինական ներկայացուցչին ընդգրկել կենտրոնի կազմակերպվող միջոցառումներին:

3.3 Սովորողի Օրինական ներկայացուցիչը իրավունք ունի՝

3.3.1 պաշտպանելու իր և իր երեխայի շահերը համապատասխան մարմիններում,

3.3.2 մասնակցելու ուսումնական ծրագրերի արդյունավետության գնահատման գործընթացին,

3.3.3 մասնակցելու կենտրոնի կրթադաստիարակչական գործընթացին,

3.3.4 մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը,

3.3.5 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

3.4 Սովորողը իրավունք ունի՝

3.4.1 հաճախել մեկից ավելի խմբակ,

3.4.2 խմբից խումբ տեղափոխվել,

3.4.3 ուսումնական ծրագրի վատ յուրացման կամ ցանկության դեպքում կրկնել ուսումնական ծրագիրը:

3.5 Կենտրոնը պարտավոր է՝

3.5.1 մինչև Պայմանագրի կնքելը Սովորողի Օրինական ներկայացուցչին ծանոթացնել կենտրոնի կանոնադրությանը, իրականացվող ուսումնական ծրագրին, Սովորողի և Սովորողի Օրինական ներկայացուցչի ներքին կարգապահական կանոններին, կրթադաստիարակչական այլ պայմաններին,

3.5.2 հաստատությունում կրթական գործընթացը կազմակերպել ուսումնական ծրագրերի և արտադպրոցական կրթության պահանջներին համապատասխան:

3.6 Սովորողի Օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝

3.6.1 դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժների նկատմամբ,

3.6.2 անհրաժեշտություն առաջանալու դեպքում ներկայանալ կենտրոն,

3.6.3 սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն,

3.6.4 հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը,

3.6.5 սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

4. Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է, եթե՝

4.1 Սովորողը հաճախակի անհարգելի բացակայել է:

4.2 Սովորողը դարձել է 18 տարեկան:

4.3 Կողմերից մեկը, այդ մասին տասն օր առաջ տեղյակ է պահում մյուս կողմին:

«Ընտանիք» ՄՊՄԿ ՊՈԱԿ
Տնօրեն՝ Ա. Մինասյան _____
/ստորագրություն/

Սովորողի Օրինական ներկայացուցիչ՝ _____
/ստորագրություն/ ազգանուն, անուն/

Պայմանագրի լուծարման պատճառը՝

_____

_____

_____: